Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ, ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը նշում է, որ ԼՂԻՄ-ի պրոբլեմի լուծումը մշտապես գտնվում է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի, նրա նախագահության և Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի ուշադրության կենտրոնում: Որոշակի աշխատանք է տարվում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վերաբերյալ ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումների կատարման ուղղությամբ:

Միջոցառումներ են իրականացվում ԼՂԻՄ-ի հետ Հայկական ԽՍՀ փոխադարձ կապերի աշխուժացման, սոցիալ-տնտեսական ոլորտում, մշակութային և հոգևոր կյանքում համագործակցության զարգացման ուղղությամբ:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը միաժամանակ նշում է, որ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումները դեռևս անբավարար են կատարվում միութենական ու հանրապետական մինիստրությունների և գերատեսչությունների կողմից: Հայկական ԽՍՀ ավտոմոբիլային ճանապարհների շինարարության և շահագործման մինիստրությունը, Հայկական ԽՍՀ պետշինը, Հայկական ԽՍՀ բնակչության ընպասարկման պետական կոմիտեն, «Անդրնավթգազշին», «Հայտրանսշին» տրեստները չեն կատարել սահմանված առաջադրանքները: ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերը դանդաղ են լուծվում, բացակայում է ջանքերի պատշաճ կոորդինացումը նախատեսված ծրագրի լիակատար իրականացման համար հատկացված միջոցների նպատակային օգտագործումն ապահովելու գործում: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից կազմված ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեն դեռևս չի իրականացրել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թվականի հունվարի 12-ի որոշումը ԽՍՀՄ պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմիններին անմիջականորեն ենթարկվելու մասին:

Ռեգիոնում պահպանվում է լարվածությունը: ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի և կուսակցության մարզկոմի լիազորությունների դադարեցումը չի նպաստում կուտակված պրոբլեմների լուծմանը: Հասունացած հարցերի լուծման նկատմամբ հին մտածելակերպի և մոտեցումների բազմաթիվ կրկնորդումների պատճառով զանազան խոչընդոտներ են հարուցվում ԼՂԻՄ-ի հետ Հայկական ԽՍՀ-ի բնականոն կապերի հաստատման գործում:

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհուրդը **որոշում է.**

1. Հանձնարարել Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին՝ ապահովել ԼՂԻՄ-ի վերաբերյալ ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումների իրականացման ուղղությամբ մշակված միջոցառումների անվերապահ կատարումը: Մեկամսյա ժամկետում մշակել և ներկայացնել լրացուցիչ միջոցառումներ՝ 1989—1990 թվականներին սոցիալ-տնտեսական և կուլտուրական ոլորտներում ԼՂԻՄ-ին օգնություն ցույց տալու ուղղությամբ:

2. Տեղյակ պահել ԽՄԿԿ Կենտկոմին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդին և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին, որ միութենական մինիստրությունները և գերատեսչություններն անբավարար են կենսագործում ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման մասին ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումները: Խնդրել ձեռնարկելու համապատասխան միջոցներ:

3. Առաջարկություն մտցնել. ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ՝

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ՈՐՈՇՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ԼՂԻՄ-ի պրոբլեմի քննարկման ու հետագա լուծման համար դեպուտատական հանձնաժողով կազմելու մասին:

4. Հարց բարձրացնել ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի ստատուսը վերանայելու մասին, ընդլայնելով նրա լիազորությունները, ռեալ իրավունքներ տալ ինքնավար մարզը պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմիններին ենթարկելու գործում:

5. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը, հաշվի առնելով ԼՂԻՄ-ում ստեղծված բարդ իրադրության կապակցությամբ Հայկական ԽՍՀ աշխատավորների լուրջ մտահոգությունը, դիմում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդին և ԽՄԿԿ Կենտկոմին ժողովրդական դեպուտատների մարզային խորհուրդը և կուսակցության մարզային կոմիտեն վերականգնելու առաջարկությամբ:

6. Դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ ի կատարումը ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի որոշման, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումար առաջարկություններ մտցնել ԽՍՀՄ սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին, որոնք հնարավորություն ընձեռեն ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքով սահմանադրական ճանապարհով լուծելու ազգամիջյան վիճելի հարցերը:

7. Կազմել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի հանձնաժողով՝ ԼՂԻՄ-ի հետ տնտեսական, սոցիալ-կուլտուրական, հոգևոր կապերի համակողմանի զարգացման ուղղությամբ աշխատանքի կոորդինացման և վերահսկողության համար:

8. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, ստեղծված հանձնաժողովին՝ ապահովել գործուն վերահսկողություն հանրապետության խորհրդային և տնտեսական մարմինների կողմից ԼՂԻՄ-ի վերաբերյալ ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումների կատարման նկատմամբ:

9. Հաջորդ նստաշրջանում լսել Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի ինֆորմացիան ԼՂԻՄ-ի վերաբերյալ որոշումների կատարման մասին:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝ Հ. ՈՍԿԱՆՅԱՆ

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ

23 հունիսի 1989 թվականի, քաղ. Երևան